

հրատարակեց, անկիս հրատարեցաւ: Հրատարականի տաթիս անոր խօսած ճարտ ցուարուսն է Մարտիկեան Լ.Ֆլնատի անձնուէր հոդիին:

Ահաասիկ:

«Լ.Ֆլնատին ր, այսօր ես ձեր հրատարեալ նախարարն եմ, այսինքն այլևս ձեր ընկերը չեմ, բայց ձեզմէ բաժնուելէս ետքն այ սիրով միշտ ձեզի հետ պիտի ըլլամ: Ենորհակալ եմ որ պաշտօնավարութեանս ամբողջ տևողութեանը կատարեալ պարտանանաշուութիւն և անձնուիրութիւն ցոյց տուիք և ձեր նախարարը մինակ չթողուցիք իր վերակազմութեան ջանքին մէջ: Ամենէն մեծ պաշտօնեայէն մինչև ամենէն փոքր պաշտօնեան, մինչև անոնք զորս խառնէկ կը կուչիք — և որոնց երբէք ես խառնեմի ստորնացուցիչ անունը չտուի, քանի որ անոնք ալ մեզի պէս հայրենիքի ծառայողներ են — իրենց պարտականութեան բարձրութեան վրայ մնացին, և մանաւանդ աս վերջինս միաներուն, ուր թոշակները մասամբ միայն վճարուեցան, շարունակեցին ըստ առաջնոյն իրենց աշխատութիւնը...»

«Իմ նախարարութեանս տևողութեան եթէ երբեք ոմանց զէմ խտտօրէն վարուեցայ, ոչ մէկուն անձին հետ գործ չունէի: Ես նկատի ունեցայ միայն պաշտօն և այդ պաշտօնին պարտադրած պատասխանատուութիւնն էր որ ուզեցի զգացնել ամենուն: Ամենէն մեծ պաշտօնեաներու հետ ամենէն անելի խտտօրէն վարուեցայ, որովհետև որչափ պաշտօնայ բարձրանայ, պատասխանատուութիւնն ալ այդ համեմատութեամբ կը մեծնայ:

«Երբ գործի գլուխ եկայ, նախ ուզեցի հեռագրական պաշտօնականերուն վիճակը բարելաւել, որովհետև անոնք, մանաւանդ գաւառներու մէջ, ստիպուած են մութ տեղերու մէջ և սկար լոյսերու տակ աշխատել շնչի թոշակով: Ես ասոնց ամսականին վրայ յաւելում ընել տուի: Իսկ ուրիշ կարգ մը պաշտօնեաններու ամսականին վրայ ալ ըլլալիք յաւելումներուն համար հարկ եղած վարկը շտրուեցաւ: Արեւ ծրագիրներ ալ մշակուեցան, որոնց գործադրութեան գրուելէն առաջ կը ստիպուիմ մեկնիլ:

«Այսօր Ձեզմէ բաժնուելու ատեն կ'ողջունեմ ձեր բոլորը, և ձեր միջոցով կ'ողջունեմ մինչև հեռաւոր նահանգներու մէջ աշխատող բաթթայի բոլոր մեծ ու պզտիկ պաշտօնեանները: Կ'ողջունեմ ձեզի և կը մաղթեմ որ աշխատիք ու յառաջդիմէք և իբրև ձեր աշխատութեան վարձք ստանաք օսմ. հայրենիքին բարօրութիւնը»:

Կը մտածեմ ինքերինս որ Թուրքիոյ զբախք երկիրը կարելի պիտի ըլլար զրտեստի փոխել քանի մը տարիէն, եթէ Ասկան է.Ֆ. Մարտիկեանի նման նախարարներ շատ գտնուէին:

\*\*\*

«Կընծակ Թի. 51»

**ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇՒԱՐՔ**

**ԼԻՎՈՅՆՈՅԻ ՀԱՅՈՅ ԲՈՂՈՔԱՅԻՐԻՆ ԱՌԻԾԻՐԱՆԱԽՈՐ ՕՐՄԻՆԻ**

Նուիրական է միզ համար ամէն ինչ որ հեռութեան մէջէն յանկարծ կը ծագի հայ անուամբ զրոշմուած, և նոր լոյս, նոր ճառագայթ մը կը ցոլացնէ ազգային պատմութեան մթին ստուերները փարատելու համար: Այս անգամ կայծ մ'է որ կը յառնէ դիւաններու փոշիներէ և յետ ի Հոովմայ մինչև Աթէնք գաղթելու՝ կու գայ հանգչելու այս խաղաղ կղզիկիս մէջ որոյ վերև երկու դարերէ ի վեր հայկական շունչն և հոգին կը թևածեն: Հրօ պարակաւ շնորհակալութիւն կը յայտնենք առ պատ. Ռուսեչչպետ Տօրթ. Սպիրտիոն Լամբրոս, որ զայս ծանոց մեզ և գեղեցիկ լուսատիպ պատկերով մը դիւրացուց մեր հրատարակութիւնը: Պատասխանիս մասն կը կազմէր երբեմն՝ ծիրանաւոր Օրսինիի դիւանական հաւաքածոյին, ուստի և մենք Օրսինի պէտք ենք ուղղել այն Ռուսիկի ծիրանաւորին անունը՝ առ որ ուղղուած է թախանձանաց նամակը կամ բողոքագիրը:

Պարունակութիւնն ամենապարզ է և կարօտ չէ մեկնութեան. իսկ ինչ որ մեզ համար թանկագին ու կարևոր է, է բուն իսկ զայն ստորագրողին անունը՝ Խոնա Սաֆար, որդի Խոնա Սոյրսանումի: Այսու մի քալ աւելի յառաջ կ'երթանք ցեղազրութեան մը ճիւղաւորութեանց մէջ, Աբգարեանց ցեղազրութեան, որ ժ.Չ. ժի. զարերու մէջ, Թէպէտ դեռ ոչ բուրոգովին

բացայայտ՝ բայց կարևոր գործունէութեամբ մը նշանաւոր հանդիսացած է և նորոգած հին փայլուն յիշատակներու արձագանգը: Այս խոստ Սաֆարն է ուրեմն որդի Սոլրաւնուի և թոռն հռչակաւոր հայ տպագրութեան ռահահորդ (թէ ոչ նախահայր) Արզար զպրի: Այսու կը պարզուի նաև կարևոր խնդիր մ'ալ և կը ստուգուի որ Արզար կոչումը ո՛չ թէ անհատական յատուկ անուն, այլ ընտանեկան մականունն մ'էր ազնուական տոհմի մը: Արդէն իսկ Ստեփանոս Ռօշքեան զԱրզար կը ճանչնար Սէֆէր անուամբ, Պարոն Սէֆէր Արզարեկց. նոյն անուամբ կը կնքուի նաև իր թոռը, որ ժառանգ կը հանդիսանայ՝ այս նամակիս մէջ՝ իր հօրը Սուլթանում (= Սուլթանշահ)ի պատուոյն և աստիճանին՝ իբրև իշխան կամ վերակացու հայոց, որ է Հոռմ և ի Լիվոռնոյ կը գտնուին: Այս տոհմին կը պատկանի նաև այն բողոքականուտ և յեղուպեան իմաստուն տիկինը՝ Արեւիկա, որուն շիրիմնաքարը՝ դիմագծաւ և արձանագրութեամբ՝ կը գտնուի ի Հոռմի Սրբուհի Մարիամ - Եգիպտացի եկեղեցւոյն մէջ. և շիրիմը կանգնողը է նոյն ինքն քեռորդին Տէր Բարթուղիմէոս որ 1605ին Լևոն Ե.ի պարգևագրին օրինակը կը վաւերացնէ իր ստորագրութեամբ և մայրենի մականուամբ կը կոչէ ինքզինքը Տէր Բարդղիմէոս Արխարացի: Անտարակոյս այս միջոց Հոռմէն բացակայ կը գտնուէր Սուլթանշահ հանգուցեալ տիկնոջ եղբայրը (կամ եղբորդին ?)

Այս է տապանաքարը  
 Mulier Sapiens laudabitur  
 D. O. M.  
 Aureliae (Gabriae (?) Abbagarae  
 Moribus ingenioque praestantissimae  
 Foeminae  
 Multiplici eruditione variarumque  
 linguarum peritia  
 Supra muliebrem captum excoltae  
 D. Barthol.<sup>s</sup> Abagarus  
 Materterae benemerenti P.  
 Obiit die II Mens. Aug. An. 1609  
 vixit an. 63

\* \* \*

Վեհագոյն, և բարբարոյ, իշխանաց իշխան՝ պայ և պայագատ գերագոյն հօրն մերոյ՝ մանանիսմօ՝ կարտիւնար ռուսինէ, հասցէ աղերսանք և խնդիրք. և թէ ի վեհ բարձրութեանէդ խոնարհիս և ունկընդիր լինիս աղերսանաց մերոց՝ որ է աղերսանք մեր այս: Չի հիւրատունն մեր, որ է նաւակատեալ յանուն սրբոյն Մարիամու եգիպտացւոյն. որ է վասն ուխտաւորաց հայոց ազգին, և վասն սիրոյ, զի ուխտաւորք յորժամ գայցեն ի մեծն Հոռմ մեր շինութիւն ընկացին առ ո՛սոս սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի ուխտ, զոր կարգեալ ունիմք ի սրբոց նախահարցն մերոց և ձերոց, այսինքն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն, և ի սրբոյն Սեղբեստրոսէ Հոռմմայ Հայրապետէն և այդ բազում սրբոց նախահարցն մերոց և ձերոց: Իսկ սոժմ, ոչ միայն ի շինութիւն, այլ և ի մեծ զայթազդութիւն, վասն ոմանց չարագունից՝ և խարբբայ սպասաւորաց. որք արտրեն զուխտաւորսն և զսպասաւորսն հայոց ազգին, մինչ զի յեկեղեցւոջն այն՝ ո՛չ լինի ժամ և ժամակարգութիւն. ո՛չ պատարագ, և ո՛չ ողորմութիւն, ո՛չ կնքակուր, և ոչ սէր լոկ խօսիւք միայն, այլ ևս փութով արտրեն զչքաւորսն և զաղքատսն յեկեղեցւոջն, և ո՛չ կատարեն ըզսահմանեալ ողորմութիւնն չքքաւորացն մերոց. զոր նախնիքն մեր և հայրապետքն առաքելական սուրբ Աթոռոյն Հոռմմայ կարգեալ են: Եւ ևս առ անարգութիւն մեր, զհիւրատունն մեր թշնամեաց խաչին Քրիստոսի ազգին յերբայեցոց և այլոց նեստորականաց սպաստանից տեղիս են արարեալ. զոր լուեալ մեր յոյժ տառապանս կրեմք, թէ զիանդ մոռացեալ եղէք զսէրն առաջին՝ զոր ունէին նախ սուրբ հարցն մեր առ միմեանս. սակայն կրկին միտարարեք զմեզ՝ զիտեղով թէ այսպիսի արարողութիւնքն ո՛չ են կամ բարձրութեան ձերոյ: Վասն որոյ՝ երեսս անկեալ աղաչեմք ըզբարձրութիւն ձեր, որպէս զի աներկբայ յուսով ընդունելոց եմք ի վեհանձնութեանէդ ձերմէ՛ զխնդրուածս մեր. զի որպէս

ի ժամանակս նախկինս կացուցեալ կայր այլը՝ որ ամենայն սպասաւորքն ազգաւ հայ էին, և քահանայքն ժամ և ժամաւ կարգութիւն և պատարագն՝ մեր լեզուան կատարէին ըստ ասանդութեան մեր և սահմանացն ուղղափառ հաւատոցն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. զի ուխտաւորքն մեր կարող լինիցին իմասաւ, և շրջազայտացնն զեկեղեցեցոն, և զմասունս սրբոց Առաքելոցն և զայլոցն ամենեցուն ուխտս աւրացնն. զի մի այսուհետեւ պակասեցին ուխտաւոր մեր առնելոյ զուխտս ի մեծն Հոովմ, այդ հետեւեցին զալ ի մի առ ոտս սրբոց Առաքելոցն կատարել զուխտս իւրեանց, զի պակասեալ էին վասն պակասութեան հայոց քահանայից՝ զորս սպասաւորք տեղոյդ աքսորեն: Եւ որպէս սովորութիւն էր կերակրել յեկեղեցւոյ՝ կերակրել զաղբատս և զչքաւորան. և մի՛ մուծցեն հիւրատունն մեր այսուհետեւ զազգն հրէից և կամ զայլ հերձուածող նշատորականս, տաճկաց և կամ այլոց՝ այս միայն զուղղափառ ազգն Հայոց Գրիգորի Լուսաւորչին, ընդ որս սուրբ Եկեղեցին Հոովմայ ունի զզաշինան սիրոյ և միաբանութեան, զծագրեալ կենարար արեամբն Քրիստոսի:

Գարձեալ խնդրեմք ի բարձրութենէդ ըսովմ՝ զի լաւ և մի ըստ միողէ թէՖթիշ և հասապ առցէ պետութիւն քո զսպասաւորացդ զայդմանէ, զի այսքան ժամանակ՝ առաւել քան զութսուն և զշրորս ամ է. զոր այսքան մուտն եկեղեցւոյն ժողովն, այսինքն զկէլուրն կամ զփողն. և ո՛չ գիտունք գինչ առնեն, որ աւելի քան զհազար սկուլթ կայր ի նախկին ժամանակն, այնչափ են զողացեալ ի գլխոյն, որ մինչ ի վեց հարիւրն են հասուցեալ. և զայն ևս ո՛չ խոստովանին. և ասեն ցմեզ թէ երկու հարիւր սկոյթ անճաղ կայ՝ և ո՛չ աւելի, և զայն ևս ոչ կամին ցոյց տալ. և ասեն թէ հայք զողացեբ են զտեղիս ապրանքն, և այս Լուիճի անուն էրէցն որ տեղիս պահապան եղեալ էք: Զի այս տասնեվեց ամ է որ զեկեղեցին մեր՝ զողանալով աւերեալ է, և յորամ ոչ կարէ զհասապն տալ՝ ասէ թէ

հայք զողացեբ են, և այսպիսի անարգ խօսիւք խոցէ և վիրաւորէ զազգս մեր. նա և միամիտքն համարին թէ այս լինի կամաւորութեամբ բարձրութեան ձերոյ, և մօսսինիոր ինրմիճէրիծն ասէ Հայոցն՝ թէ այդ էրէցն է աւերեալ զեկեղեցին Հայոց և զողացեալ. զայդ էրէցն ի զաղին քաշեցէք և թէՖթիշ արարէք զայդ՝ թէ յորժամ զքեզ տեսուչ և վերակացու եղին՝ և զեկեղեցին անձնեալ են ի քեզ, զկէլուրն և զգրեանն կացուցմանցն և կէլուրիցն, այժմ ո՛ր է, այնպիսի անձնառութեան զըրեանքն և թուխտքն. զի էրէցն ոչ կարէ ցուցանել զայնպիսի անձնառութեան զիրան կէլուրիցն, այժմ տեսցէ մեծութիւն քո, զի եթէ մօսսինեօրն ո՛չ կարէ ինքն միայն թէՖթիշ ընդ ժողովոյն առնուլ յերիցուն. նշանն յայտնագոյն է զի և ինքն համախոհ է զործոց նորին, վասն որոյ երկնչի ի նմանէ զթէՖթիշ առնուլ, և կամի զի հայք տարցնն զէրէցն ի դատաստան. և ինքն յօգնութիւն եկեսցէ հայոցն և այսու անմեղ կամի ցուցանել զինքն երիցուն և մեզ, զի ոչ է ինքն որ առնէ զայն՝ այլ հայքն զի մի էրէցն ի բարկութենէն յայտնեսցէ ևս զզաղտնիսն իւր և մեզ և դատաստանին. ողջ լեր ի տէր: Գրեցաւ ի քաղաքն ի Լիվօնայ, ի թվինն ի ծննդենէն Քրիստոսի, Թ. ԶԺ. Խ. և ինն ամին: ի թուարեորութեանս հայկազեան սումարիս Թ. Գ. և ուլմն. Մայիսի ամսոյն ի քսան և հինգ: Ի խնդրոյ պարոն, պայ, և պայազատ, խօջայ Սուլթանուլի որդի խօջայ Սաֆարին. որ է վերակացու Հայոց յկիթ, և այլոց վաճառականաց ջուղայեցոց՝ որք կային ի Լիվօնայ:

\*\*\*

Կը յաջողոցն գրեթէ հարիւրի չափ ստորագրութիւնք և կնիք, յորս արժանի կը համարինք յիշելու Գրիգոր օմն ծառայ Աստուծոյ որ նամակիս բուն օրինակող կամ զբազիրն է և իւր կնքոյն քով կը գրէ, խնդրող բանիս և մերսամած ծրոյ սորա (Գրիգոր ծառայ Աստուծոյ):

Հ. Ծ. ԱԻԳԻՐ